ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 22.10.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/75

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝

Հ. Ենգոյանի (լիազորագիր՝ տրված 13.10.2021թ.),

Դ. Հակոբյանի (լիազորագիր՝ տրված 15.10.2021թ.),

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի ներկայացուցիչներ՝

Տ. Վարդազարյանի և Հ. Ռամազյանի (լիազորագրեր՝ տրված 15.10.2021թ.)

քննելով «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի առանձին հատկացված հրապարակում նոր 110/220 կՎ բաց բաշխիչ սարքերի (ԲԲՍ-ի) կառուցման ապամոնտաժային, շինմոնտաժային և գործարկման-կարգաբերման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-2/21» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ի կողմից 11.10.2021թ. ներկայացված (12.10.2021թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/75 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. <u>«Էկրա Կովկաս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Էկրա Կովկաս» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 11.10.2021թ. ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

««ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից վերջինիս կարիքների համար «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի առանձին հատկացված հրապարակում նոր 110/220 կՎ բաց բաշխիչ սարքերի (ԲԲՍ-ի) կառուցման ապամոնտաժային, շինմոնտաժային և գործարկման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-2/21» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերի համաձայն՝ Ընթացակարգը իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի և ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման Հավելված 1-ի (Գնումների գործընթացի կազմակերպման կարգ) 21-րդ կետի 2-րդ ենթակետի բ) պարբերության համաձայն:

Հրավերին կից Ծավալաթերթ-նախահաշվի համաձայն՝ Ընթացակարգի շրջանակներում ՀՀ ռեզիդենտ չհանդիսացող անձի հետ պայմանագիր կնքելու դեպքում պայմանագրի կատարման փուլում առաջացող՝ ՀՀ պետական բյուջե վճարման ենթակա հարկերը այդ թվում ԱԱՀ հաշվանցվում և ՀՀ պետական բյուջե են վճարվում ՀՀ ռեզիդենտ չհանդիսացող անձին վճարման ենթակա գումարից, ինչպես նաև Պատվիրատուի կողմից Կատարողի փոխարեն կատարված մաքսազերծման, լոգիստիկ կամ ցանկացած այլ ծառայության դիմաց վճարները:

Տվյալ ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.09.2021թ. ժամը 16:00 նիստի թիվ 3.1 արձանագրության 7-րդ բաժնի համաձայն՝ Ընթացակարգի մասնակիցները 2021թ. հոկտեմբերի 5-ին հրավիրվում են գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների անցկացման, որի տևողությունը սահմանվում է 30 րոպե: Բանակցությունները կանցկացվեն ZOOM հավելվածի միջոցով, որի էլեկտրոնային հղումը կուղարկվի մասնակիցների էլ. փոստին: Բանակցությունների համար սահմանվում է նվազեցման շեմ, այն է՝ 50 մլն. ՀՀ դրամը, բանակցությունները անցկացվելու են ռուսերեն լեզվով:

Բանակցություններին երկու մասնակից մասնակցել են ոչ ZOOM հավելվածի միջոցով, այլ ֆիզիկապես գտնվելով «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի այն սենկայում, որտեղից վարողը վարել է բանակցությունները:

Մասնակիցներից մեկը բանակցություններին մասնակցել է անգրերեն լեզվով՝ գնային առաջարկները հնչեցնելով բացառապես անգլերեն: Թարգմանություն չի ապահովվել:

Բանակցությունների վերջին հատվածի բովանդակությունը (ZOOM հավելվածի ձայնագրությունը ասյտեղ՝ https://drive.google.com/file/d/1MwdMU9wCgXXgnPuZdQYZXII4onYO-1Uz/view?usp=sharing, հղումը կցվում է) հետևյալն է (սղագրված է մեր կողմից).

Քարտուղար,- Մենք չունենք ժամանակ, մոտ 4 րոպե, խնդրում եմ ներկայացնել արդյո՞ք ունենք հնարավորություն գնիջեցման,- դիմեց բոլոր ներկա մասնակիցներին:

Քարտուղարը հարցը ուղղեց չինական ընկերությանը:

Չինական ընկերությունը հնչեցրեց՝ 13 մլրդ. 720 մլն ՀՀ դրամ, որպես իրենց կողմից ներկայացվող գնառաջարկ:

Քարտուղար,- «Լավ, ունենք 2 րոպե, շարունակենք...»

Քարտուղար,- «Ժամանակը կանգնեցված է»:

«Արհովշին» ընկերությունը առաջարկեց 13 մլրդ. 400 մլն ՀՀ դրամ, որպես իրենց կողմից ներկայացվող գնառաջարկ:

Քարտուղարը դիմում է «Էկրա Կովկաս» Ընկերության ներկայացուցչին

«Էկրա Կովկաս» Ընկերության ներկայացուցիչը առաջարկում է 14 մլրդ ՀՀ դրամ, որպես իրենց կողմից ներկայացվող գնառաջարկ:

«Էփրան» ընկերության ներկայացուցիչ՝

Ես հարց ունեմ, կարելի՞ է...

Եթե իմ առաջարկը ամենացածրն է, ես կարող եմ արդյո՞ք բարձրացնել գինը

Քարտուղար,- ոչ չէք կարող

Քարտուղարը դիմեց «Կասկադ Էներգո» Ընկերության ներկայացուցչին, առաջարկելով ներկայացնել իրենց գնային առաջարկը:

«Կասկադ Էներգո» Ընկերությունը առաջարկեց 27 մլն. 150 հազար ԱՄՆ դոլար, որպես իրենց կողմից ներկայացվող գնառաջարկ:

Քարտուղարը նորից հնչեցնում է «Կասկադ Էներգո» Ընկերության առաջարկված գումարը և հնչեցնում է այն ՀՀ դրամով, այն է՝ 13 մլրդ. 328մլն 749 հ. 500 ՀՀ դրամ:

Քարտուղարը, ասելով, որ ժամանակը սպառվում է, խնդրում է «Էփրան» Ընկերությանը վերջնական գնառաջարկ անել:

Այդ պահին «Էլերոն» ընկերության ներկայացուցիչը առաջարկում է 13 մլրդ 250 մլն ՀՀ դրամ, որպես իրենց կողմից ներկայացվող գնառաջարկ:

Քարտուղար,- բայց դա ավելի բարձր է, քան առաջարկել է «Էփրան'» Ընկերությունը. նրանց առաջարկն է 8 մլրդ 400 մլն ՀՀ դրամ:

«Էլերոն» Ընկերության ներկայացուցիչ, - այո, բարձր է, ֆիքսեք 13 մլրդ 250մլն ՀՀ դրամ

Քարտուղարը ասաց, - լավ, 13 մլրդ 250մլն ՀՀ դրամ:

Քարտուղար, - « Էփրան», խնդրում եմ նորից հնչեցրեք Ձեր վերջնական թիվը:

«Կասկադ Էներգո» Ընկերության ներկայացուցիչը, ընդհատելով բանակցությունների բնականոն ընթացքը, առաջարկեց 13 մլրդ 200 մլն ՀՀ դրամ, որպես իրենց կողմից ներկայացվող գնառաջարկ:

Քարտուղար, - լավ, «Էփրան», հիմա Դուք:

« Էփրան» Ընկերության ներկայացուցիչը առաջարկում է 8մլրդ 400 մլն ՀՀ դրամ և հարց ուղղում քարտուղարին,- Իմ առաջարկը առաջին տեղում է, ա՞յո:

Քարտուղար,- Հարգելի մասնակիցներ, Ձեզ հատկացված ժամանակը ավարտվում է:

«Ռոս Ատոմ» Ընկերության ներկայացուցիչը ներողություն խնդրելով, ասում է, որ ուզում ափդեյթ անել գինը և նոր գնառաջարկ անել:

Քարտուղար,- Ժամանակը արդեն սպառվել է:

«Ռոս Ատոմ» Ընկերության ներկայացուցիչ,- Դե, մինչ ժամանակը գալիս է իր ավարտին, մենք գնառաջարկ ենք անում:

«Ռոս Ատոմ» Ընկերության ներկայացուցիչը առաջարկեց 13 մլրդ ՀՀ դրամ և խնդրեց այն ֆիքսել, որպես իրենց կողմից ներկայացվող գնառաջարկ:

Քարտուղար,- ... բայց, Ձեր առաջարկած թիվը ավելի բարձր է, քան առաջարկում է «Էփրան» Ընկերությունը:

«Ռոս Ատոմ» Ընկերության ներկայացուցիչ,- Այո, մեր առաջարկը ավելի բարձր է, ամեն ինչ ճիշտ է:

«Էփրան» Ընկերության ներկայացուցիչ, - Ես չեմ հասկանու՛մ, ինչու՞ եք շարունակում բանակցությունները, ժամանակը սպառված է. արդեն իսկ, հնչեցվել է վերջնական 13 մլրդ ՀՀ դրամ թիվը:

Քարտուղար,- «Էփրան», տեսեք, ոչ ոք գնիջեցում չի անում, խնդրում եմ թույլ տվեք ավարտել բանակցությունները:

Քարտուղար, – Ամփոփելով, բանակցությունների արդյունքը ստացվում է, որ «Էփրան» Ընկերությունը առաջարկում է ամենա ցածր գինը՝ 8 մլրդ 400 մլն ՀՀ դրամ, «Էփրան», խնդրում եմ ասեք, այս առաջարկը, արդյո՞ք ներառում է իր մեջ ԱԱՀ-ն:

’«Էփրան» Ընկերության ներկայացուցիչ, - Այո, ԱԱՀ-ն ներառված է:

Քարտուղար, – Շնորհակալություն:

Հարգելի մասնակիցներ, ես ավարտեցի: Մեկ անգամ ևս ուզում եմ կրկնել, որ «Էփրան» Ընկերության առաջարկված 8 մլրդ 400մլն ՀՀ դրամ գումարը ներառում է ԱԱՀ-ն , որը վճարվում է ՀՀ բյուջե, եթե չունեք ավելացնելու որևէ բան, Ձեր թույլտվությամբ, ավարտենք: Բոլորին լավ օր:

Բանակցությունների արդյունքները արձանագրվել են Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.10.2021թ. թիվ 4 արձանագրությամբ, որի համաձայն գնային առաջարկները հետևյալն են.

6. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը
Цена, предложенная каждым из участников

Ձեռք բերվող աշխատանքի անվանումը **Наименование приобретаемого товара**	*ՀԱԷԿ-ի առանձին հատկացված հրապարակում նոր 110/220 ԿՎ բաց բաշխիչ սարքերի (ԲԲՍ-ի) կառուցման ապամոնտաժային, շինմոնտաժային և գործարկման-կարգաբերման աշխատանքների կատարման /* *Выполнение демонтажных, строительно-монтажных и пусконаладочных работ при сооружении нового ОРУ-110/220кВ на отдельно выделенной площадке ААЭС*		
Գնումը կատարելու համար նախատեսված սահմանաչափ (ՀՀ դրամ) / запланированная установленная максимальная цена (драмов РА)	*15,902,951,070.0 /տասնհինգ միլիարդ ինը հարյուր երկու միլիոն ինը հարյուր հիսունմեկ հազար յոթանասուն/* *пятнадцать миллиардов девятьсот два миллиона девятьсот пятьдесят одна тысяча семьдесят*		
Մասնակիցների գնային առաջարկները **Ценовые предложения участников**			
		Մասնակցության հայտում նշված գնային առաջարկ / ценовое предложение, указанное в заявке на участие (հավելված 2 / приложение 2)	**Բանակցությունների արդյունքում ստացված գնային առաջարկ** **Ценовое предложение, полученное в итоге переговоров**
«Էկրա Կովկաս» ՍՊԸ / ООО «Экра Ковкас»	Առանց ԱԱՀ (ՀՀ դրամ)/ без НДС (драмов РА)	*13,239,237,870.0*	*11,666,666,666.67*
	ներառյալ ԱԱՀ (ՀՀ դրամ) / вкл. НДС (драмов РА)	***15,887,085,444.0***	***14,000,000,000.0***
«Ռուսատոմ Սերվիս» ԲԸ / АО «Русатом Сервис»	USD (առանց ԱԱՀ / без НДС)	*27,538,458.03*	*23,340,055.2*
	USD (ներառյալ ԱԱՀ / без НДС)	***33,046,149.64***	***28,008,066.3***
	Առանց ԱԱՀ (ՀՀ դրամ)/ без НДС (драмов РА)	*13,519,455,200.66*	*11,458,333,333.33*
	ներառյալ ԱԱՀ (ՀՀ դրամ) вкл. НДС (драмов РА)	***16,223,346,242.76***	***13,750,000,000.0***
«Էփրան» ՍՊԸ / ООО «Эпран»	Առանց ԱԱՀ (ՀՀ դրամ)/ без НДС (драмов РА)	*8,241,500,074.0*	*7,000,000,000.0*
	ներառյալ ԱԱՀ (ՀՀ դրամ) вкл. НДС (драмов РА)	***9,889,800,089.0***	***8,400,000,000.0***
«ՆՊԿ Էլլիրոն» ՓԲԸ / ЗАО «НПК Эллирон»	USD (առանց ԱԱՀ / без НДС)	***31,980,000.0***	***26,989,591.1***
	USD (ներառյալ ԱԱՀ / без НДС)	***ԱԱՀ վճարող չէ / не является плательщиком НДС на территории РА***	-
	Առանց ԱԱՀ (ՀՀ դրամ)/ без НДС (драмов РА)	***15,699,941,400.0***	***13,250,000,000.0***
	ներառյալ ԱԱՀ (ՀՀ դրամ) вкл. НДС (драмов РА)	-	-
«Չինական էլեկտրաէներգետիկական ճարտարագիտանախագծային կորպորացիային կից հյուսիսչինական էլեկտրաէներգետիկական նախագծային ընկերություն» ՍՊԸ /ООО «Северокитайская электроэнергетическая проектная компания при китайской электроэнергетической инженерно-конструкционной корпорации»	USD (առանց ԱԱՀ / без НДС)	*35,040,000.0*	*27,946,957.8*
	USD (ներառյալ ԱԱՀ / без НДС)	***ԱԱՀ վճարող չէ / не является плательщиком НДС на территории РА***	-
	Առանց ԱԱՀ (ՀՀ դրամ)/ без НДС (драмов РА)	*17,202,187,200.0*	*13,720,000,000.0*
	ներառյալ ԱԱՀ (ՀՀ դրամ) вкл. НДС (драмов РА)	-	-

		մասնակցի համար նշել “X”/	դրամ/
1	«Էփրան» ՍՊԸ	X	7,000,000.0
2	ՍՊԸ «ԷՅՍԻԻ Աուտոմեյշն» / ACE Automation LLC		7,041,666.666
3	«Կասկադ Էներգո» ՍՊԸ		11,000,000.0
4	«Արհովշին» ՍՊԸ		11,166,666.666
5	«Ռուսատոմ Սերվիս» ԲԸ		11,458,333.333
6	«Էկրա Կովկաս» ՍՊԸ		11,666,666.666
7	«ՆՊԿ Էլլիրոն» ՓԲԸ		13,250,000.0
8	«Չինական էլեկտրաէներգետիկական ճարտարագիտանախագծային կորպորացիային կից հյուսիսչինական էլեկտրաէներգետիկական նախագծային ընկերություն» ՍՊԸ		13,720,000.0

Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Տվյալ պարագայում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից բանակցությունների արդյունքում թույլ են տրվել գնումների մասին ՀՀ օրենսդրության հետևյալ խախտումները.

1. Բանակցությունների վարման սահմանված կարգի կոպիտ խախտումներ

Ինչպես արդեն նշել ենք, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.09.2021թ. ժամը 16:00 նիստի թիվ 3.1 արձանագրության 7-րդ բաժնի համաձայն՝ Ընթացակարգի մասնակիցները 2021թ. հոկտեմբերի 5-ին հրավիրվում են գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների անցկացման, որի տևողությունը սահմանվում է 30 րոպե: Բանակցությունները կանցկացվեն ZOOM հավելվածի միջոցով, որի էլեկտրոնային հղումը կուղարկվի մասնակիցների էլ. փոստին: Բանակցությունների համար սահմանվում է նվազեցման շեմ, այն է՝ 50 մլն. ՀՀ դրամը, բանակցությունները անցկացվելու են ռուսերեն լեզվով:

Մինչդեռ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը կոպտորեն խախտել է հենց իր իսկ կողմից սահմանված բանակցությունների վարման կարգը, մասնավորապես.

Սահմանված է եղել, որ բանակցությունները կանցկացվեն ZOOM հավելվածի միջոցով, որի էլեկտրոնային հղումը կուղարկվի մասնակիցների էլ. փոստին: Բոլոր մասնակիցները online ռեժիմով միացել են ZOOM հարթակին և մասնակցել բանակցություններին ZOOM հավելվածի միջոցով, որի արդյունքում միաժամանակ տեսանելի են եղել մյուս մասնակիցներին: Սակայն գնահատող հանձնաժողովը թույլ է տվել 2 մասնակցին՝ «Արհովշին» ՍՊԸ-ին և «Կասկադ Էներգո» ՍՊԸ-ին մասնակցել տվյալ բանակցությունների առանց ZOOM հավելվածի՝ գտնվելով «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի բանակցությունների սենյակում: Մինչդեռ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից սահմանված բանակցությունների անցկացման կարգում խոսք անգամ չի եղել, որ մասնակցությունը կարող է լինել միաժամանակ և՛ ZOOM հավելվածի միջոցով, և՛ իրական ռեժիմով:

Սահմանվել է, որ բանակցությունները անցկացվելու են ռուսերեն լեզվով: Մինչդեռ բանակցությունների ողջ ընթացքում «ԷՅՍԻԻ Աուտոմեյշն» ՍՊԸ-ն /ACE Automation LLC/ բանակցություններին մասնակցել է անգլերեն լեզվով, չի ապահովվել դրա թարգմանությունը, և որը ամենակարևորն է, գնահատող հանձնաժողովը դրա դեմ չի առարկել, իսկ վերջինիս գնային առաջարկները հնչել են բացառապես անգլերեն լեզվով: Հատկանշական է, որ, օրինակ, չինական ընկերությունը՝ «Չինական էլեկտրաէներգետիկական ճարտարագիտանախագծային կորպորացիային կից հյուսիսչինական էլեկտրաէներգետիկական նախագծային ընկերություն» ՍՊԸ-ն, բանակցություններին մասնակցել է իր թարգմանիչի միջոցով՝ ապահովելով բանակցությունների մասնակցությունը բացառապես ռուսերենի միջոցով:

Բանակցությունների համար սահմանվել է տևողություն՝ 30 րոպե, որը մասնակցի խնդրանքով կարող է կեսեցվել՝ գնային առաջարկը ձևակերպելու համար: Բանակցությունների 28-րդ րոպեյում (րոպեն երևում է վարողի ցույց տված հեռախոսի էկրանի վրա) «Չինական էլեկտրաէներգետիկական ճարտարագիտանախագծային կորպորացիային կից հյուսիսչինական էլեկտրաէներգետիկական նախագծային ընկերություն» ՍՊԸ-ն խնդրում է կասեցնել ժամանակը՝ գնային նոր առաջարկ ներկայացնելու համար: Բանակցությունները 28-րդ րոպեյի 03 վայրկյանում կասեցվում են, որից հետո երկու վայրկյանում չինական ընկերությունը հնչեցնում է նոր գնային առաջարկ, սակայն բանակցությունները վարողը չի հայտարարում, որ հանում է բանակցությունների կասեցումը: Այնուհետև բանակցությունների համար սահմանված 30 րոպեն (ձայնագրության 41 րոպես 14 վայրկյան) ավարտվում է «ՆՊԿ Էլլիրոն» ՓԲԸ-ի կողմից հնչեցրած գնային առաջարկկով՝ 13 միլիարդ 250 մլն ՀՀ դրամով, սակայն բանակցությունների վարողը չի արձանագրում, որ բանակցությունների իրենց կողմից սահմանված ժամանակը սպառվել է և շարունակում է բանակցությունները, մասնավորապես, 30 րոպեն լրանալուց հետո հնչում է հետևյալը (ձայնագրության 41 րոպե 15 վայրկյանից).

Քարտուղար, - « Էփրան», խնդրում եմ նորից հնչեցրեք Ձեր վերջնական թիվը:

«Կասկադ Էներգո» Ընկերության ներկայացուցիչը, ընդհատելով բանակցությունների բնականոն ընթացքը, առաջարկեց 13 մլրդ 200 մլն ՀՀ դրամ, որպես իրենց կողմից ներկայացվող գնառաջարկ:

Քարտուղար, - լավ, «Էփրան», հիմա Դուք:

«Էփրան» Ընկերության ներկայացուցիչը առաջարկում է 8մլրդ 400 մլն ՀՀ դրամ և հարց ուղղում քարտուղարին,- Իմ առաջարկը առաջին տեղում է, ա՞յո:

Քարտուղար,- Հարգելի մասնակիցներ, Ձեզ հատկացված ժամանակը ավարտվում է:

«Ռոս Ատոմ» Ընկերության ներկայացուցիչը ներողություն խնդրելով, ասում է, որ ուզում ափդեյթ անել գինը և նոր գնառաջարկ անել:

Քարտուղար,- Ժամանակը արդեն սպառվել է:

«Ռոս Ատոմ» Ընկերության ներկայացուցիչ,- Դե, մինչ ժամանակը գալիս է իր ավարտին, մենք գնառաջարկ ենք անում:

«Ռոս Ատոմ» Ընկերության ներկայացուցիչը առաջարկեց 13 մլրդ ՀՀ դրամ և խնդրեց այն ֆիքսել, որպես իրենց կողմից ներկայացվող գնառաջարկ:

Քարտուղար,- ... բայց, Ձեր առաջարկած թիվը ավելի բարձր է, քան առաջարկում է «Էփրան» Ընկերությունը:

«Ռոս Ատոմ» Ընկերության ներկայացուցիչ,- Այո, մեր առաջարկը ավելի բարձր է, ամեն ինչ ճիշտ է:

«Էփրան» Ընկերության ներկայացուցիչ, - Ես չեմ հասկանու՛մ, ինչու՞ եք շարունակում բանակցությունները, ժամանակը սպառված է. արդեն իսկ, հնչեցվել է վերջնական 13 մլրդ ՀՀ դրամ թիվը:

Քարտուղար,- «Էփրան», տեսեք, ոչ ոք գնիջեցում չի անում, խնդրում եմ թույլ տվեք ավարտել բանակցությունները:

Քարտուղար, – Ամփոփելով, բանակցությունների արդյունքը ստացվում է, որ «Էփրան» Ընկերությունը առաջարկում է ամենա ցածր գինը՝ 8 մլրդ 400 մլն ՀՀ դրամ, «Էփրան», խնդրում եմ ասեք, այս առաջարկը, արդյո՞ք ներառում է իր մեջ ԱԱՀ-ն:

«Էփրան» Ընկերության ներկայացուցիչ, - Այո, ԱԱՀ-ն ներառված է:

Քարտուղար, – Շնորհակալություն:

Հարգելի մասնակիցներ, ես ավարտեցի ընդունել նոր գնային առաջարկներ:

Վերոհիշյալից ուղղակիորեն երևում է, որ բանակցությունների համար սահմանված 30-րդ րոպեն հստակ ավարտվում է «ՆՊԿ Էլլիրոն» ՓԲԸ-ի կողմից հնչեցրած գնային առաջարկկով՝ 13 միլիարդ 250 մլն ՀՀ դրամով, սակայն բանակցությունների վարողը չի արձանագրում, որ բանակցությունների իրենց կողմից սահմանված ժամանակը սպառվել է և շարունակում է բանակցությունները, մասնավորապես, 30 րոպեն լրանալուց հետո հնչում

են երկու մասնակցի նոր գնային առաջարկ՝ «Կասկադ Էներգո» ՍՊԸ-ի գնային առաջարկը՝ 13 մլրդ 200 մլն ՀՀ դրամ և «Ռոս Ատոմ» ՍՊԸ-ի գնային առաջարկը՝ 13 մլրդ ՀՀ դրամ:

Այս կապակցությամբ բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ երկու կարևոր փաստ, նախ՝ «Կասկադ Էներգո» ՍՊԸ-ի հնչեցրած նոր գնային առաջարկը՝ 13 մլրդ 200 մլն ՀՀ դրամը, նիստը վարողի կողմից չի հնչեցվում և արձանագրվում, մինչդեռ «Ռոս Ատոմ» ՍՊԸ-ի գնային առաջարկը՝ 13 մլրդ ՀՀ դրամ հնչեցվում է նիստը վարողի կողմից: Սակայն կասկածելի պայմաններում բանակցությունների արդյունքում կազմված արձանագրությունում (բանակցությունների արդյունքները արձանագրվել են Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.10.2021թ. թիվ 4 արձանագրություն) անհասկանալիորեն որպես «Կասկադ Էներգո» ՍՊԸ-ի նվազեցված գնային առաջարկ ներկայացվում է 13 մլրդ 200 մլն ՀՀ դրամը, մինչդեռ «Ռոս Ատոմ» Ընկերության առաջարկած և բանակցությունները վարողի կողմից բարցրաձայնված 13 մլրդ ՀՀ դրամի փոխարեն արձանագրված է նախորդ գնային առաջարկը՝ 13 մլրդ 750 մլն ՀՀ դրամը:

Վերոհիշյալ խախտումները ուղղակիորեն վկայում են, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կոպտորեն խախտել է հենց իրենց իսկ կողմից սահմանված բանակցությունների վարման կարգը, հանձնաժողովը դրսևորել է խտրական մոտեցում մասնակիցների նկատմամբ, բանակցությունների անցկացման ժամանակ չի ապահովել միասնական կանոններով և ոչ խտրական հիմունքներով բանակցությունների անցկացում, մասնակիցների համար մասնակցելու իրավահավասարություն, որն էլ իր հերթին հանգեցրել է գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունքի խախտմանը:

Արդյունքում գնահատող հանձնաժողովը խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 7-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները:

2. *Բանակցությունների անցկացման համար համար ժամանակային սահմանափակում*

Գտնում ենք, որ հիմնավոր չէ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից բանակցությունների անցկացման համար իմպերատիվ 30 րոպե սահմանելը, քանի որ բանակցությունների ընթացքից երևում է, որ մասնակիցները դեռևս շարունակում էին կատարել գնային առաջարկների նվազեցումներ:

Ժամանակային սահմանափակումը առավել ևս դառնում է անհիմն այն պարագայում, երբ հենց ինքը, գնահատող հանձնաժողովը, չի դադարեցնում բանակցությունները 30-րդ րոպեն լռանալուն պես:

Գտնում ենք, որ նման ժամանակային սահմանափակումը կարող է հանգեցնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման սկզբունքի խախտմանը:

3. Ոչ ռեզիդենտ հանդիսացող ընկերության նվազեցված գնային առաջարկի սխալ արձանագրումը:

Ինչպես արդեն նշել ենք, Ընթացակարգի հրավերին կից Ծավալաթերթ-նախահաշվի համաձայն՝ Ընթացակարգի շրջանակներում ՀՀ ռեզիդենտ չհանդիսացող անձի հետ պայմանագիր կնքելու դեպքում պայմանագրի կատարման փուլում առաջացող՝ ՀՀ պետական բյուջե վճարման ենթակա հարկերը այդ թվում ԱԱՀ հաշվանցվում և ՀՀ պետական բյուջե են վճարվում ՀՀ ռեզիդենտ չհանդիսացող անձին վճարման ենթակա գումարից, ինչպես նաև Պատվիրատուի կողմից Կատարողի փոխարեն կատարված մաքսազերծման, լոգիստիկ կամ ցանկացած այլ ծառայության դիմաց վճարները:

Վերոհիշյալից ուղղակիորեն բխում է, որ ՀՀ ռեզիդենտ չհանդիսացող անձի կողմից առաջարկված գումարից/գնային առաջարկից պետք է հանել ՀՀ պետական բյուջե վճարման ենթակա հարկերը, այդ թվում նաև ԱԱՀ-ն:

Սակայն «ՆՊԿ Էլլիրոն» ՓԲԸ-ի կողմից հնչեցրած վերջնական գնային առաջարկը՝ 13 միլիարդ 250 մլն ՀՀ դրամը, անհասկանալիորեն գնահատող հանձնաժողովի կողմից դիտարկվել է որպես առանց ԱԱՀ գումար և չի ներկայացվել 13 միլիարդ 250 մլն ՀՀ դրամը՝ առանց ԱԱՀ, և դրան համապատասխան կատարվել իր գնային առաջարկի համեմատությունը: Մինչդեռ մյուս ոչ ռեզիդենտ ընկերությունների կողմից հնչեցրած գնային առաջարկներից հանվել է ԱԱՀ գումարը, կատարվել է համապատասխան հաշվարկ, ներկայացվել է առանց ԱԱՀ գումարը և մասնակցի տեղերը բաշխվել են՝ ըստ համապատասխան գների: Օրինակ, ոչ ռեզիդետ ընկերություն հանդիսացող «Ռոս Ատոմ» ՍՊԸ-ի հնչեցրած գնային առաջարկից՝ 13 մլրդ 750 մլն ՀՀ դրամից Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հանվել է ԱԱՀ գումարը և ստացվել է առանց ԱԱՀ գնային առաջարկ և միայն նոր այդ թիվը համեմատվել մյուսների գնային առաջարկների հետ, ինչը չի կատարվել «ՆՊԿ Էլլիրոն» ՓԲԸ-ի կողմից հնչեցրած վերջնական գնային առաջարկի հետ:

Վերոհիշհալի արդյունքում հանձնաժողովը դրսևորել է խտրական մոտեցում մասնակիցների նկատմամբ, բանակցությունների անցկացման ժամանակ չի ապահովել

միասնական կանոններով և ոչ խտրական հիմունքներով բանակցությունների անցկացում, մասնակիցների համար մասնակցելու իրավահավասարություն, որն էլ իր հերթին հանգեցրել է գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունքի խախտմանը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ.

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման…:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում եմ

1. Պարտավորեցնել «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-2/21» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել հանձնաժողովի 05.10.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացրած բոլոր որոշումները:

2. Պարտավորեցնել «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-2/21» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին անցկացնել գների նվազեցման շուրջ միաժամանակյա նոր բանացություններ»:

Ի լրումն բողոքի Ընկերությունը հայտնել է հետևյալը.

Ձեր վարույթում է քննվում «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ի կողմից 11.10.2021թ. ներկայացրած ԳԲՔԱ-ՆԳ-2021/75 ծածկագրով բողոքը:

Վերոհիշյալ բողոքով վիճարկվել է «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից վերջինիս կարիքների համար «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի առանձին հատկացված հրապարակում նոր 110/220 կՎ բաց բաշխիչ սարքերի (ԲԲՍ-ի) կառուցման ապամոնտաժային, շինմոնտաժային և գործարկման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-2/21» ծածկագրով բաց մրցույթով (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) անցկացված գների շուրջ միաժամանակյա բանակցությունները գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան կազմակերպված և անցկացված լինելը:

Մասնավորապես, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.09.2021թ. ժամը 16:00 նիստի թիվ 3.1 արձանագրության 7-րդ բաժնի համաձայն՝ Ընթացակարգի մասնակիցները 2021թ. հոկտեմբերի 5-ին հրավիրվում են գների նվազեցման շուրջ

միաժամանակյա բանակցությունների անցկացման, որի տևողությունը սահմանվում է 30 րոպե: Բանակցությունները կանցկացվեն ZOOM հավելվածի միջոցով, որի էլեկտրոնային հղումը կուղարկվի մասնակիցների էլ. փոստին: Բանակցությունների համար սահմանվում է նվազեցման շեմ, այն է՝ 50 մլն. ՀՀ դրամը, բանակցությունները անցկացվելու են ռուսերեն լեզվով:

Այս առումով գտնում ենք, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.09.2021թ. ժամը 16:00 նիստի թիվ 3.1 արձանագրության 7-րդ բաժնով սահմանված պահանջը առ այն, որ բանակցությունները պետք է անցկացվեն ZOOM հավելվածի միջոցով, չի բխում գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներից և խախտում ՀՀ տնտեսվարողների շահերը, ինչպես նաև այդ բանակցությունները ռուսերեն լեզվով անցկացնելու մասին սահմանված պահանջը:

Բացի այդ, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.09.2021թ. ժամը 16:00 նիստի թիվ 3.1 արձանագրության 7-րդ բաժնով սահմանվել էր պահանջ, որ բանակցությունների տևողությունը սահմանվում է 30 րոպե:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ մի շատ կարևոր հանգամանք, այն է. բանակցությունների ողջ ընթացքում մասնակիցների համար տեսանելի չէր ժամանակի ընթացը, տեսանելի չէր գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից պահված Timer-ը՝ միացված բբջային հեռախոսի վրա: Բանն այն է, որ գնահատող հանձնաժողովի քարտուղարը պարբերաբար կասեցնում էր այդ ժամանակը՝ մասնակցի կողմից նոր գնային առաջարկ ձևավորելու համար, և բացարձակ անհասկանալի էր և մասնակիցների համար անտեսանելի, թե որ րոպեին բանակցությունները կասեցվեցին, իսկ որ րոպեյին շարունակվեցին: Բանակցությունների 28 րոպեյում նոր մենք տեսնում ենք գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից հեռախոսի վրա միացված Timer-ը, այն էլ նորից այդ Timer-ը վերանում է համակարգչի էկրանից, և նորից մասնակիցները պետք է կռահեն, թե բանակցությունները որ րոպեյում են գտնվում կամ կասեցումը հանվեց, թե չէ:

Վերոհիշյալ տեխնիկական խնդիրը էական նշանակություն ուներ ողջ բանակցությունների ընթացի վրա և խոչընտոտում էր մասնակիցներին ժամանակի մեջ տեղավորվելու և գնային առաջարկ ներկայացնելու առումով: Այս խնդիրը առավել ակնհայտ է դառնում, երբ «Ռոս Ատոմ» Ընկերության կողմից ներկայացված վերջին գնային առաջարկը չի ընդունվում գնահատող հանձնաժողովի կողմից՝ ժամկետը սպառվելու հիմքով, այն դեպքում, երբ ժամկետի ընթացքը տեսանելի չէր մասնակիցների համար:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք որպես «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած ԳԲՔԱ-ՆԳ-2021/75 ծածկագրով բողոքի պահանջ դիտարկել սույն բողոքի լրացմամբ ներկայացրած հետևյալ պահանջները.

1. Պարտավորեցնել «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-2/21» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել հանձնաժողովի 05.10.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացրած բոլոր որոշումները:

2. Պարտավորեցնել «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-2/21» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին անցկացնել գների նվազեցման շուրջ միաժամանակյա նոր բանացություններ:

կամ

3. Պարտավորեցնել «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-2/21» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարել «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-2/21» ծածկագրով բաց մրցույթը»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 18.10.2021թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը ովքեր պնդել են բողոքը:

2. <u>«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 18.10.2021թ. թիվ Ե/40/27617-21 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասի՝ «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ի բողոքի քննության նպատակով Ձեր դիտարկմանն ենք ներկայացնում «Հայկական ատոմային էլեկտրակայան» Փակ Բաժնետիրական Ընկերության (այսուհետ՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ) գրավոր դիրքորոշումը:

«ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների «ՀԱԷԿ-ի առանձին հատկացված հրապարակում նոր 110/220 կՎ բաց բաշխիչ սարքերի (ԲԲՍ-ի) կառուցման ապամոնտաժային, շինմոնտաժային և գործարկման աշխատանքներ»-ի ձեռք բերման նպատակով ս/թ օգոստոսի 3-ին հրապարակվել է «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-2/21» ծածկագրով գնման ընթացակարգը (այսուհետ՝ ընթացակարգ), որին ի թիվս այլ մասնակիցների մասնակցության հայտ է ներկայացրել

նաև «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ն: Գնման ընթացակարգը հրապարակված է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի հիման վրա, որը իրենից ենթադրում է, որ բավարար գնահատված մասնակիցները պետք է հրավիրվեն առաջարկված գների նվազեցման շուրջ բանակցությունների անցկացման:

«Էկրա Կովկաս» ՍՊԸ-ի մասնակցության հայտը գնահատվել է բավարար և ընկերությունը հրավիրվել է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններին:

Սույն գնումը կատարելու համար նախատեսված սահմանաչափն է՝ 15,902,991,070.0 /տասնհինգ միլիարդ ինը հարյուր երկու միլիոն ինը հարյուր հիսունմեկ հազար յոթանասուն/ ՀՀ դրամը:

Մասնակցության հայտի Հավելված 2-ով մասնակիցների կողմից տրված գնային առաջարկները հետևյալն են.

«ԷՅՍԻԻ Աուտոմեյշն» ՍՊԸ (ACE Automation LLC) - 8,613,535,238.99 (ներառյալ ԱԱՀ)

«Էփրան» ՍՊԸ - 9,889,800,089.0 (ներառյալ ԱԱՀ)

«Էկրա Կովկաս» ՍՊԸ - 15,887,085,444.0 (ներառյալ ԱԱՀ)

«Ռուսատոմ Սերվիս» ԲԸ (АО «Русатом Сервис») - 16,223,346,242.76 (ներառուլ ԱԱՀ)

«ՆՊԿ Էլլիրոն» ՓԲԸ (ЗАО «НПК Эллирон») - 15,699,941,400.0 (ՀՀ պետբյուջե ԱԱՀ վճարող չէ)

«Չինական էլեկտրաէներգետիկական ճարտարագիտանախագծային կորպորացիային կից հյուսիսչինական էլեկտրաէներգետիկական նախագծային ընկերություն» ՍՊԸ (ООО «Северокитайская электроэнергетическая проектная компания при китайской электроэнергетической инженерно-конструкционной корпорации») - 17,202,187,200.0 (ՀՀ պետբյուջե ԱԱՀ վճարող չէ)

«Արհովշին» ՍՊԸ - 18,199,980,000.0 (ներառյալ ԱԱՀ)

«Կասկադ Էներգո» ՍՊԸ - 15,260,743,639.68 (ներառյալ ԱԱՀ)

Բանակցությունների արդյունքում նվազագույն գնային առաջարկը ստացվել է «Էփրան» ՍՊԸ-ից: «Էփրան» ՍՊԸ-ն առաջարկել է ձեռք բերվող աշխատանքները կատարել 8,400,000,000.0 (ութ միլիարդ չորս հարյուր միլիոն) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) գումարով, իսկ բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետի ավարտին բողոքաբերից ստացվել է 14,000,000,000.0 (տասնչորս միլիարդ) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) գնային առաջարկ:

ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման Հավելված 1-ի (Գնումների գործընթացի կազմակերպման կարգ) 40-րդ կետի 5-րդ ենթակետի «ե» պարբերության համաձայն գնահատող հանձնաժողովը հայտարարել է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին, որի համաձայն «Էփրան» ՍՊԸ-ն հանդիսացել է ընտրված մասնակից, իսկ բողոքաբերը 6-րդ տեղ զբաղեցրած մասնակից:

Հաշվի առնելով COVID-19-ի հետ կապված իրավիճակը՝ իրենից բխող սահմանափակումներով, գնահատող հանձնաժողովի թիվ 3.1 արձանագրությամբ սահմանվել է, որ բանակցությունները կանցկացվեն ZOOM հավելվածի միջոցով և, քանի որ առկա են եղել տարբեր երկրներից մասնակիցներ, սահմանվել է, որ բանակցությունները կանցկացվեն ռուսերեն լեզվով:

«Արհովշին» ՍՊԸ-ն և «Կասկադ Էներգո» ՍՊԸ-ն դիմել են բանակցություններին ֆիզիկապես ներկա գտնվելու համար (ՀԱԷԿ-ի տարածքում): Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 5-րդ մասի «Մասնակիցները և նրանց ներկայացուցիչները կարող են ներկա լինել գնահատող հանձնաժողովի նիստերին»: Հաշվի առնելով սույն դրույթը՝ Պատվիրատուն չէր կարող առարկել նիստին ֆիզիկապես ներկա լինելու ցանկություն հայտնած մասնակցին: Նշենք, որ բողոքաբերի կողմից նման առաջարկ չենք ստացել, ավելին նիստի ժամանակ բողոքաբերը չի առարկել «Արհովշին» ՍՊԸ-ի և «Կասկադ Էներգո» ՍՊԸ-ի բանակցությանը ֆիզիկապես ներկա լինելու հանգամանքին:

«ԷՅՍԻԻ Աուտոմեյշն» ՍՊԸ-ի անգլերեն լեզվով բանակցություններին մասնակցելու առնչությամբ գնահատող հանձնաժողովը չի առարկել՝ ուղղորդվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով, և հաշվի առնելով, որ «ԷՅՍԻԻ Աուտոմեյշն» ՍՊԸ-ն հանդիսանում է ի սկզբանե նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից, շարունակել է բանակցությունները «ԷՅՍԻԻ Աուտոմեյշն» ՍՊԸ-ի հետ: «ԷՅՍԻԻ Աուտոմեյշն» ՍՊԸ-ի գնային առաջարկը նշվել է ZOOM հավելվածի տեքստային հաղորդագրության դաշտում, ինչպես նաև «ԷՅՍԻԻ Աուտոմեյշն» ՍՊԸ-ի կողմից հնչեցված գնային առաջարկը թարգմանվել է ռուսերեն լեզվով: Սույնով համարում ենք, որ չի խախտվել բանակցությունների համար սահմանված կարգը, քանի որ բանակցությունները վարվել են ռուսերեն լեզվով:

Բողոքաբերի այն հայտարարությունը, որ մասնակիցները դեռ 30 րոպեի ավարտից հետո կարող էին կատարել նոր գնային առաջարկներ, Ձեր ուշադրությունն ենք ցանկանում

հրավիրել այն հանգամանքին, որ գնահատող հանձնաժողովի կողմից հրապարակվել է, որ բանակցությունների համար սահմանված ժամանակը մոտենում է ավարտին և նվազագույն գնային առաջարկն է 8,400,000,000.0 ՀՀ դրամը և, եթե որևէ մասնակից ունի ավելի ցածր գնային առաջարկ, առաջարկվել է հրապարակել այն: Սակայն մասնակիցների կողմից 8,400,000,000.0 ՀՀ դրամից ցածր գնային առաջարկ չի կատարվել:

ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման Հավելված 1-ի (Գնումների գործընթացի կազմակերպման կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն «մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման»:

Գնման ընթացակարգի մասնակիցներից «ՆՊԿ Էլիրոն» ՓԲԸ-ն և «Չինական էլեկտրաէներգետիկական ճարտարագիտանախագծային կորպորացիային կից հյուսիսչինական էլեկտրաէներգետիկական նախագծային ընկերություն» ՍՊԸ-ն իրենց գնային առաջարկները (Հավելված 2) ներկայացրել են առանց ԱԱՀ դաշտը լրացնելու: «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության մեջ առկա չէ դրույթ, որով ուղղորդվելով, գնահատող հանձնաժողովը պետք է առանց ԱԱՀ ներկայացված գնային առաջարկից հանի ԱԱՀ-ն և ապա համեմատի ԱԱՀ վճարող (սույն դաշտը լրացրած) մասնակցի գնային առաջարկի հետ, հետևաբար առկա չէ դրույթ, որը խախտել է գնահատող հանձնաժողովը: Ակնհայտ է, որ բուղոքաբերի հարցը չի վերաբերվում իր շահերի խախտմանը, ավելին, եթե «ՆՊԿ Էլիրոն» ՓԲԸ-ի գնային առաջարկից առանձնացվի ԱԱՀ-ն և նոր համեմատվի այլ մասնակիցների գնային առաջարկների հետ, բողոքաբերի գնային առաջարկը կստացվի ավելի բարձր քան «ՆՊԿ Էլիրոն» ՓԲԸ-ի գնային առաջարկն է:

Ինչ վերաբերվում է ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացված պարզաբանմանը, տեղեկացնեմ որ ՀԱԷԿ-ի շահագործման ժամկետի երկարացման համար անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռք բերման նպատակով

կազմակերպված գնման ընթացակարգերի փաթեթները անգործության ժամկետում ուղարկվում են մի շարք պետական կառույցներ՝ մոնիտորինգի նպատակով՝ ներառյալ ՀՀ ՖՆ: Մինչ օրս ՀՀ ՖՆ-ից բացասական դիրքորոշում ZOOM հավելվածի միջոցով անցկացվող բանակցությունների հետ կապված չենք ստացել:

Ամփոփելով վերը նշվածը՝ կարծում ենք, որ բողոքաբեր անձի բողոքը անհիմն է, քանի որ գնահատող հանձնաժողովը գործել է բացառապես «Գնումների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ և այլ իրավական ակտերով սահմանված նորմերով՝ ապահովելով գնման գործընթացի մրցակցային, համաչափ և ոչ խտրական կազմակերպումը, ինչպես նաև հաշվի առնելով, որ «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ին արդեն իսկ առաջարկվել է կատարել գնային առաջարկի նվազեցում և նվազեցվեծ գինը կազմել է 14,000,000,000.0 ՀՀ դրամ, որը բարձր է անգամ մինչ բանակցությունները առկա նվազագույն գնային առաջարկից»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 18.10.2021թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր հայտնել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

<u>3. ԳԲՔԱ-ՆԳ-2021/75 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ԳԲՔԱ-ՆԳ-2021/75 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի առանձին հատկացված հրապարակում նոր 110/220 կՎ բաց բաշխիչ սարքերի (ԲԲՍ-ի) կառուցման ապամոնտաժային, շինմոնտաժային և գործարկման-կարգաբերման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-2/21» ծածկագրով բաց մրցույթ (հետայսու՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտեր են ներկայացրել «Էկրա Կովկաս» ՍՊԸ, «Ռուսատոմ Սերվիս» ԲԸ, «Էփրան» ՍՊԸ, «ՆՊԿ Էլլիրոն» ՓԲԸ, «Չինական էլեկտրաէներգետիկական ճարտարագիտանախագծային կորպորացիային կից հյուսիսչինական էլեկտրաէներգետիկական նախագծային ընկերություն» ՍՊԸ (ООО «Северокитайская электроэнергетическая проектная компания

при китайской электроэнергетической инженерно-конструкционной корпорации»), «Արիովշին» ՍՊԸ, «ԷՅՍԻԻ Աուտոմեյշն» ՍՊԸ (ACE Automation LLC), «Կասկադ Էներգո» ՍՊԸ և «ՌԵՄ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.09.2021թ. նիստի թիվ 3.1 արձանագրության 7-րդ կետով արձանագրվել է, որ Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» և «դ» պարբերությունների համաձայն՝ Ընթացակարգի մասնակիցները ս/թ. հոկտեմբերի 5-ին հրավիրվում են առաջարկված գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների անցկացման, որի տևողությունը սահմանվում է 30 րոպե: Բանակցությունները կանցկացվեն ZOOM հավելվածի միջոցով, որի էլեկտրոնային հղումը կուղարկվի մասնակիցների էլ. փոստին: Բանակցությունների համար սահմանվում է գնիջեցման նվազագույն շեմ, այն է՝ 50 մլն. ՀՀ դրամը, բանակցությունները անցկացվելու են ռուսերեն լեզվով:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.10.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ բանակցությունների համար սահմանված ժամկետի (30 րոպե) ավարտից հետո «Ռուսատոմ Սերվիս» ՍՊԸ-ի կողմից կատարվել է նոր գնային առաջարկ 13 000. 000. 000 ՀՀ դրամ, որը Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «է» պարբերության համաձայն չի դիտարկվել:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ «Էփրան» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Էկրա կովկաս» ՍՊԸ-ի 11.10.2021թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 18.10.2021թ. թիվ Ե/40/27617-21 գրությունը և գործում առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 40-րդ կետի 5-րդ ենթակետի և Ընթացակարգի հրավերի 8.7-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ***<u>ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին</u>***,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը,

դ. յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը,

ե. ***<u>բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին</u>***, ըստ դրան ներկա մասնակիցների ներկայացրած գների, որոնք չեն գերազանցում գնման հայտով սահմանված գինը, որոշվում ու հայտարարվում են ընտրված և հաջորդական տեղերն զբաղեցրած մասնակիցները,

զ. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե դրան ներկա մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են գնման հայտով սահմանված գինը, ապա գնահատող հանձնաժողովը կարող է բանակցությունների արդյունքում ցածր գնային առաջարկ ներկայացրած մասնակցին հայտարարել ընտրված մասնակից՝ պայմանով, որ վերջինիս հետ կնքվող պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքներն ու պարտականություններն ուժի մեջ են մտնում գնման հայտով սահմանված գինը գերազանցող չափով լրացուցիչ ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համաձայնագիր կնքելու դեպքում: Ընդ որում, համաձայնագիրը կնքվում է լրացուցիչ ֆինանսական միջոցները նախատեսվելուն հաջորդող տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում՝ ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման ժամկետները երկարաձգելով պայմանագրի կնքման օրվանից մինչև համաձայնագրի կնքման օրն ընկած ժամանակահատվածով: Սույն պարբերության համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե կնքելուն հաջորդող վաթսուն օրացուցային օրվա ընթացքում լրացուցիչ ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում,

է. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե դրան ներկա մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են գնման հայտով սահմանված գինը կամ նվազագույն գները հավասար են, գնման ընթացակարգն օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա հայտարարվում է չկայացած, բացառությամբ սույն ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված դեպքի.

Այսպես, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի առանձին հատկացված հրապարակում նոր 110/220 կՎ բաց բաշխիչ սարքերի (ԲԲՍ-ի) կառուցման ապամոնտաժային, շինմոնտաժային և գործարկման-կարգաբերման

աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-2/21» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով հայտեր են ներկայացրել «Էկրա Կովկաս» ՍՊԸ, «Ռուսատոմ Սերվիս» ԲԸ, «Էփրան» ՍՊԸ, «ՆՊԿ Էլլիրոն» ՓԲԸ, «Չինական էլեկտրաէներգետիկական ճարտարագիտանախագծային կորպորացիային կից հյուսիսչինական էլեկտրաէներգետիկական նախագծային ընկերություն» ՍՊԸ (ООО «Северокитайская электроэнергетическая проектная компания при китайской электроэнергетической инженерно-конструкционной корпорации»), «Արհովշին» ՍՊԸ, «ԷՅՍԻԻ Աուտոմեյշն» ՍՊԸ (ACE Automation LLC), «Կասկադ Էներգո» ՍՊԸ և «ՌԵՄ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.09.2021թ. նիստի թիվ 3.1 արձանագրության 7-րդ կետով արձանագրվել է, որ կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» և «դ» պարբերությունների համաձայն՝ Ընթացակարգի մասնակիցները ս/թ. հոկտեմբերի 5-ին հրավիրվում են առաջարկված գների նվազեցման շուրջ միաժամանակյա ***բանակցությունների անցկացման***, որի ***տևողությունը սահմանվում է 30 րոպե: Բանակցությունները կանցկացվեն ZOOM հավելվածի միջոցով, որի էլեկտրոնային հղումը կուղարկվի մասնակիցների էլ. փոստին: Բանակցությունների համար սահմանվում է գնիջեցման նվազագույն շեմ, այն է՝ 50 մլն. ՀՀ դրամը, բանակցությունները անցկացվելու են ռուսերեն լեզվով:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.10.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ բանակցությունների համար սահմանված ժամկետի (30 րոպե) ավարտից հետո «Ռուսատոմ Սերվիս» ՍՊԸ-ի կողմից կատարվել է նոր գնային առաջարկ 13 000 000 000 ՀՀ դրամ, որը Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «է» պարբերության համաձայն չի դիտարկվել:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ «Էփրան» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից:

Այսպիսով՝ ներկայացված բողոքի շրջանակներում ուսումնասիրելով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողություններն՝ ուղղված գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցության անցկացման իրավաչափությանն, արձանագրում եմ հետևյալը.

«Էկրա Կովկաս» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

«Սահմանված է եղել, որ բանակցությունները կանցկացվեն ZOOM հավելվածի միջոցով, որի էլեկտրոնային հղումը կուղարկվի մասնակիցների էլ. փոստին: Բոլոր մասնակիցները online ռեժիմով միացել են ZOOM հարթակին և մասնակցել բանակցություններին ZOOM հավելվածի միջոցով, որի արդյունքում միաժամանակ տեսանելի են եղել մյուս մասնակիցներին: Սակայն գնահատող հանձնաժողովը թույլ է տվել 2 մասնակցին՝ «Արհովշին» ՍՊԸ-ին և «Կասկադ Էներգո» ՍՊԸ-ին մասնակցել տվյալ բանակցությունների առանց ZOOM հավելվածի՝ գտնվելով «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի բանակցությունների սենյակում»:

Սույն մասով Պատվիրատուն 18.10.2021թ. թիվ Ե/40/27617-21 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Արհովշին» ՍՊԸ-ն և «Կասկադ Էներգո» ՍՊԸ-ն դիմել են բանակցություններին ֆիզիկապես ներկա գտնվելու համար (ՀԱԷԿ-ի տարածքում): Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 5-րդ մասի «Մասնակիցները և նրանց ներկայացուցիչները կարող են ներկա լինել գնահատող հանձնաժողովի նիստերին»: Հաշվի առնելով սույն դրույթը՝ Պատվիրատուն չէր կարող առարկել նիստին ֆիզիկապես ներկա լինելու ցանկություն հայտնած մասնակցին:

Ամփոփելով կողմերի կողմից բերված փաստարկները հարկ եմ համարում արձանագրել, որ բողոքը տվյալ մասով վերաբերում է ոչ թե գնահատող հանձնաժողովի նիստին մասնակիցների և նրանց ներկայացուցիչների ներկա գտնվելուն, այլ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.09.2021թ. նիստի թիվ 3.1 արձանագրության 7-րդ կետով սահմանման բանակցությունները ZOOM հավելվածի միջոցով անցկացնելու պահանջի պահպանմանը, այսինքն՝ բանակցության ընթացքում վերջիններիս կողմից գնային առաջարկ ներկայացնելուն:

Այսպիսով՝ տվյալ դեպքում գտնում եմ, որ Պատվիրատուն թույլատրելով «Արհովշին» ՍՊ և «Կասկադ Էներգո» ՍՊ ընկերություններին գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցության նպատակով կազմակերպված նիստին մասնակցել և գնային առաջարկ ներկայացնել առանց ZOOM հավելվածի՝ գտնվելով «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի բանակցությունների անցկացման սենյակում, գործել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.09.2021թ. նիստի թիվ 3.1 արձանագրության 7-րդ կետով սահմանված պահանջի խախտմամբ, արդյունքում խախտելով նաև Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջը, այն է՝ գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով

կազմակերպման և գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքները, որոնք գնումների և գնումների գործընթացի իրականացման կարևորագույն սկզբունքներից են:

Միևնույն ժամանակ արձանագրում եմ, որ բողոքաբերը ներկայացված բողոքով հայտնել է, հետևյալը.

«*Սահմանվել է, որ բանակցությունները անցկացվելու են ռուսերեն լեզվով: Մինչդեռ բանակցությունների ողջ ընթացքում «ԷՅՍԻԻ Աուտոմեյշն» ՍՊԸ-ն /ACE Automation LLC/ բանակցություններին մասնակցել է անգլերեն լեզվով, չի ապահովվել դրա թարգմանությունը, և որը ամենակարևորն է, գնահատող հանձնաժողովը դրա դեմ չի առարկել, իսկ վերջինիս գնային առաջարկները հնչել են բացառապես անգլերեն լեզվով*»:

Սույն մասով Պատվիրատուն հայտնել է հետևյալը.

««*ԷՅՍԻԻ Աուտոմեյշն» ՍՊԸ-ի անգլերեն լեզվով բանակցություններին մասնակցելու առնչությամբ գնահատող հանձնաժողովը չի առարկել՝ ուղղորդվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով, և հաշվի առնելով, որ «ԷՅՍԻԻ Աուտոմեյշն» ՍՊԸ-ն հանդիսանում է ի սկզբանե նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից, շարունակել է բանակցությունները «ԷՅՍԻԻ Աուտոմեյշն» ՍՊԸ-ի հետ: «ԷՅՍԻԻ Աուտոմեյշն» ՍՊԸ-ի գնային առաջարկը նշվել է ZOOM հավելվածի տեքստային հաղորդագրության դաշտում, ինչպես նաև «ԷՅՍԻԻ Աուտոմեյշն» ՍՊԸ-ի կողմից հնչեցված գնային առաջարկը թարգմանվել է ռուսերեն լեզվով: Սույնով համարում ենք, որ չի խախտվել բանակցությունների համար սահմանված կարգը, քանի որ բանակցությունները վարվել են ռուսերեն լեզվով*»:

Ամփոփելով կողմերի բերված փաստարկները՝ այս տեսանկյունից հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

Այսպիսով՝ քննության առարկա դարձնելով «Հայկական ատոմային էլեկտրոկայան» ՓԲԸ-ի կողմից առցանց՝ ZOOM հավելվածի միջոցով անցկացված բանակցությունը, ինչպես նաև հաշվի առնելով այն փաստական հանգամանքը, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 30.09.2021թ. նիստի թիվ 3.1 արձանագրության 7-րդ կետով որոշում է կայացրել բանակցությունը վարել ռուսերեն լեզվով, ապա գտնում եմ, որ նման պայմաններում Պատվիրատուն թույլատրելով «ԷՅՍԻԻ Աուտոմեյշն» ՍՊԸ-ին բանակցությանը մասնակցել և գին առաջարկել անգլերեն լեզվով, գործել է իր իսկ կողմից

բանակցությունների համար սահմանված կարգի խախտմամբ, արդյունքում խախտելով նաև Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջը:

Միևնույն ժամանակ արձանագրում եմ, որ բողոքաբերը ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

«*Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.09.2021թ. ժամը 16:00 նիստի թիվ 3.1 արձանագրության 7-րդ բաժնով սահմանվել էր պահանջ, որ բանակցությունների տևողությունը սահմանվում է 30 րոպե:*

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ մի շատ կարևոր հանգամանք, այն է. բանակցությունների ողջ ընթացքում մասնակիցների համար տեսանելի չէր ժամանակի ընթացը, տեսանելի չէր գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից պահված Timer-ը՝ միացված բջջային հեռախոսի վրա: Բանն այն է, որ գնահատող հանձնաժողովի քարտուղարը պարբերաբար կասեցնում էր այդ ժամանակը՝ մասնակցի կողմից նոր գնային առաջարկ ձևավորելու համար, և բացարձակ անհասկանալի էր և մասնակիցների համար անտեսանելի, թե որ րոպեին բանակցությունները կասեցվեցին, իսկ որ րոպեին շարունակվեցին:

Վերոհիշյալ տեխնիկական խնդիրը էական նշանակություն ուներ ողջ բանակցությունների ընթացքի վրա և խոչընդոտում էր մասնակիցներին ժամանակի մեջ տեղավորվելու և գնային առաջարկ ներկայացնելու առումով»:

Սույն մասով ևս հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի դ) պարբերությամբ և Ընթացակարգի հրավերի 1-ին Մասի 8-րդ կետի 8.7-րդ ենթակետի դ) պարբերությամբ սահմանվում է, որ ***յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը:***

Վերը նշված իրավակարգավորումների իմպերատիվ պահանջն է, որ բանակցությունները կազմակերպվեն այնպես, որ ***մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը*** մասնակիցները հնարավորություն ունենան տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկները հրապարկվելուց հետո մինչև ***բանակցության համար նախատեսված ժամկետի ավարտը վերանայեն իրենց գնային առաջարկները:***

Ընդ որում՝ նույն կետի ե) պարբերությամբ սահմանվում է, որ ***բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին***, ըստ դրան ներկա մասնակիցների ներկայացրած գների, որոնք չեն գերազանցում գնման հայտով սահմանված գինը, որոշվում ու ***հայտարարվում են ընտրված և հաջորդական տեղերն զբաղեցրած մասնակիցները:***

Եվ այսպես՝ արձանագրում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 30.09.2021թ. նիստի թիվ 3.1 արձանագրության 7-րդ կետով որոշում է կայացրել բանակցությունների տևողությունը սահմանել 30 րոպե, մինչդեռ՝ քննության առարկա դարձնելով «Հայկական ատոմային էլեկտրոկայան» ՓԲԸ-ի կողմից առցանց՝ ZOOM հավելվածի միջոցով անցկացված բանակցությունն, արձանագրում եմ, որ բանակցությունների վարման ընթացքում ժամանակի ընթացքը տեսանելի չլինելու պայմաններում, ընդ որում՝ հաշվի առնելով նաև այն փաստը, որ համաձայն ZOOM հավելվածի տեսաձայնագրությունը տևել է 44 րոպե 44 վայրկյան, հնարավոր չէ արձանագրել Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի դ) պարբերությամբ և Ընթացակարգի հրավերի 1-ին Մասի 8-րդ կետի 8.7-րդ ենթակետի դ) պարբերությամբ սահմանված պահանջը նպատակին ծառայելու, ինչպես նաև հնարավոր չէ արձանագրել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.10.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության 7-րդ կետով կայացված՝ Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի ե) պարբերության համաձայն, այն է՝ բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշման իրավաչափությունը:

Այսպիսով՝ հաշվի առնելով նաև գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպման և գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքները՝ գտնում եմ, որ նման խախտումներով իրականացված գործողությունների արդյունքում պետք է դադարեցնել 05.10.2020թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացած որոշումները և հրավիրել գների շուրջ միաժամանակյա նոր բանակցություններ՝ հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված դ) և ե) պարբերություններով սահմանված պահանջները՝ հնարավորություն տալով մասնակիցներին տեսնելու բանակցության համար նախատեսված ժամանակահատվածի հոսքը, ինչը հնարավորություն կտա մինչև բանակցության համար նախատեսված

ժամկետի ավարտն անհրաժեշտության դեպքում վերանայելու իրենց գնային առաջարկները և ներկայացնելու նոր գնային առաջարկներ:

Ընդ որում՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է: Միաժամանակ գնումների գործընթացի կազմակերպման կարգը սահմանող ՀՀ կառավարության 05.04.2017թ. N 526-Ն որոշումը հստակ կարգավորում է գնման գործընթացի իրականացման կարգը՝ փուլ առ փուլ և ժամկետները:

Այսպիսով՝ համապատասխան ընթացակարգային կարգավորումներ նախատեսելն ինքնանպատակ չէ և ուղղված է կամայականություններից խուսափելուն և ժամանակին գործողություններն իրականացնելուն, քանի որ յուրաքանչյուր դեպքում ուղղված է իրավունքների և պարտականությունների իրագործմանը:

Ամփոփելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ բողոքը սույն մասով հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Միևնույն ժամանակ հարկ եմ համարում արձանագրել, որ բողոքաբերը բողոքում ներկայացրել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.09.2021թ. նիստի թիվ 3.1 արձանագրության 7-րդ կետով սահմանված բանակցությունների անցկացման կարգը, կատարել կարգին առնչվող դիտարկումներ, սակայն բողոքով որպես պահանջ ներկայացրել է 05.10.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացրած բոլոր որոշումների դադարեցնելը, հետևաբար Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն բողոքի քննության առարկա չի դարձրել սահմանված բանակցությունների անցկացման կարգի իրավաչափության հարցը:

Անդրադառնալով բողոքաբերի կողմից բողոքով ներկայացված հետևյալ դիտարկմանը. *«ՆՊԿ Էլլիրոն» ՓԲԸ-ի կողմից հնչեցրած վերջնական գնային առաջարկը՝ 13 միլիարդ 250 մլն ՀՀ դրամը, անհասկանալիորեն գնահատող հանձնաժողովի կողմից դիտարկվել է որպես առանց ԱԱՀ գումար և չի ներկայացվել 13 միլիարդ 250 մլն ՀՀ դրամը՝ առանց ԱԱՀ, և դրան համապատասխան կատարվել իր գնային առաջարկի համեմատությունը: Մինչդեռ մյուս ոչ ռեզիդենտ ընկերությունների կողմից հնչեցրած գնային առաջարկներից հանվել է ԱԱՀ գումարը, կատարվել է համապատասխան հաշվարկ, ներկայացվել է առանց ԱԱՀ գումարը և մասնակցի տեղերը բաշխվել են՝ ըստ համապատասխան գների: Օրինակ,*

ոչ ռեզիդետ ընկերություն հանդիսացող «Ռոս Ատոմ» ՍՊԸ-ի հնչեցրած գնային առաջարկից՝ 13 մլրդ 750 մլն ՀՀ դրամից Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հանվել է ԱԱՀ գումարը և ստացվել է առանց ԱԱՀ գնային առաջարկ և միայն նոր այդ թիվը համեմատվել մյուսների գնային առաջարկների հետ, ինչը չի կատարվել «ՆՊԿ Էլլիրոն» ՓԲԸ-ի կողմից հնչեցրած վերջնական գնային առաջարկի հետ», ապա սույն մասով հարկ եմ համարում արձանագրել, հետևյալը.

Օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ ***<u>եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:</u>*** Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման:

Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ ***մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով***: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: ***Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:*** Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

Տվյալ դեպքում «ՆՊԿ Էլլիրոն» ՓԲԸ-ն, ի տարբերություն մյուս ոչ ռեզիդենտ ընկերությունների, բացառությամբ «Չինական էլեկտրաէներգետիկական ճարտարագիտանախագծային կորպորացիային կից հյուսիսչինական էլեկտրաէներգետիկական նախագծային ընկերություն» ՍՊԸ-ի, Ընթացակարգին ներկայացրած հայտով գնային առաջակում ԱԱՀ-ն նախատեսել է 0, հետևաբար նման պայմաններում բանակցության ընթացքում առաջարկած գնից ԱԱՀ-ի գծով վճարվելիք գումարի առանձնացնելու և նիստի արձանագրությամբ արձանագրելու իրավասությամբ գնահատող հանձնաժողովը օժտված չէ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Էկրա Կովկաս» ՍՊԸ-ի կողմից 11.10.2021թ. ներկայացված բողոքը բավարարել՝

Պարտավորեցնել «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-2/21» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին՝

1. Դադարեցնել հանձնաժողովի 05.10.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացրած բոլոր որոշումները,

2. Անցկացնել գների նվազեցման շուրջ միաժամանակյա նոր բանակցություններ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**